

«02» հունիս 2021թ.

No 2095 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԴԵՂԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ,
ԴԵՂԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ
3482-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 1178-Ն որոշման 15-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին կից դեղապահովման խորհուրդ:
2. Հաստատել՝
 - 1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին կից դեղապահովման խորհրդի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:
 - 2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին կից դեղապահովման խորհրդի կազմը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին կից դեղապահովման խորհուրդ ստեղծելու, դեղապահովման խորհրդի կանոնադրությունը և կազմը հաստատելու մասին» թիվ 3482-Ա հրամանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ԴԵՂԱԿԱԿՈՎՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին կից դեղապահովման խարհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) խորհրդակցական մարմին է:

2. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարն է (այսուհետ՝ Խորհրդի նախագահ):

3. Խորհրդի նիստերը նախագահում և վարում է Խորհրդի նախագահը: Խորհրդի նիստերը բացառիկ դեպքերում նախարարի հանձնարարությամբ կարող է վարել նախարարի տեղակալներից մեկը:

4. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է քննարկումների միջոցով, որոնք անց են կացվում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից հայտի գնահատումից հետո ներկայացված եզրակացության հիման վրա:

5. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:

6. Խորհրդի անդամներից բացի, Խորհրդի նիստերին Խորհրդի նախագահի կամ Խորհրդի կեսից ավելիի համաձայնությամբ կարող են հրավիրվել քննարկման ներկայացված հայտում ընդգրկված դեղերի վերաբերյալ տեղեկատվության տիրապետող Նախարարության աշխատակիցները, բժշկական օգնություն և

սպասարկում իրականացնող հաստատությունների ղեկավարներ և այլ շահագրգիռ անձինք:

3. ԽՈՐՀՐԴԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

7. Խորհրդի նիստը վարում է Խորհրդի նախագահը՝ նախապես հաստատված օրակարգին համապատասխան:

8. Խորհրդի նախագահը որոշում է նիստի վայրը և ժամանակը: Խորհրդի նիստի մասին անդամները ծանուցվում են նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ:

9. Խորհրդում քննարկվելիք հայտին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը Խորհրդի անդամներին են փոխանցվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

4. ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ, ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԳԱՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

10. Խորհուրդը բաց քվեարկությամբ, ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է եզրակացություն: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է նախագահողի ձայնը:

11. Խորհրդի կողմից ուսումնասիրվում է հայտով ներկայացված դեղի առկայությունը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) մոդելային ցանկում և Հայաստանի Հանրապետությունում դեղերի գրանցամատյանում: ԱՀԿ-ի մոդելային ցանկից շեղումների դեպքում հիմք է ընդունվում ՀՀ կառավարության 2017 թվականի թից 1178-Ն որոշման հավելվածի 2-րդ բաժնի 4-րդ կետը:

12. Խորհրդն իր իրավասությունների շրջանակներում քննարկում և գնահատում է ներկայացված հայտի ու եզրակացության մեջ ընդգրված տվյալները:

13. Խորհուրդն իր եզրակացությունը կազմում է առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 1178-Ն որոշման հավելվածի ցանկ N2-ի պահանջներով:

14. Խորհրդի կողմից ստուգվում է նաև ներկայացված տվյալների հավաստիությունն՝ ըստ չորս մակարդակների՝

1) բարձր՝ հիմնված պատահական ընտրանքով և հսկվող հետազոտությունների տվյալների մետա-անալիզի կամ մեկ պատահական ընտրանքի մեթոդով իրականացված հսկվող կլինիկական փորձարկման տվյալների վրա.

2) բավարար՝ հիմնված հսկվող ոչ դիպվածային հետազոտության տվյալների կամ կոհորտային հետազոտության տվյալների վրա.

3) ցածր՝ հիմնված նկարագրողական («դեպք-ստուգում», համեմատական, կորելյացիոն) հետազոտությունների վրա.

4) անբավարար՝ հիմնված առանձին դեպքերի հետազոտությունների, մասնագետների փոխհամաձայնության վրա:

15. Խորհրդի նիստն արձանագրվում է: Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում է նախագահողը և արձանագրողը՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

16. Խորհուրդն իր եզրակացությունը տրամադրում է նախարարին՝ հայտը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆԱԽԱԳԱՀՈՂԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Խորհրդի նախագահը՝

- 1) վարում է Խորհրդի քննարկումները.
- 2) ստորագրում է Խորհրդի կողմից ընդունված եզրակացությունները.
- 3) որոշում է քննարկումներին հրավիրվող այլ անձանց կազմը.

18. Խորհրդի անդամն իրավունք ունի՝

- 1) ներկայացնել կարծիք՝ քննարկվող հայտի շուրջ
- 2) մասնակցել քվեարկությանը:

6. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

19. Խորհրդի կազմում անդամությունը դադարեցվում է՝

- 1) Խորհրդի անդամի դիմումի հիման վրա,
- 2) Խորհրդի քննարկումներին երեք անգամ անհարգելի բացակայելու դեպքում,
- 3) Խորհրդի կազմում ընդգրկված կազմակերպության լիազոր համապատասխան ներկայացուցչին փոխելու և կազմակերպության կողմից ներկայցված նոր անդամ ընդգրկելու վերաբերյալ դիմումը բավարարելու դեպքում:

7. ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՅՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

20. Խորհրդի նիստի արձանագրությունները կամ արձանագրության քաղվածքները տրամադրվում են Խորհրդի բոլոր անդամներին՝ վերջիններիս ցանկությամբ հնգօրյա ժամկետում, իսկ Խորհրդի նիստի եզրակացությունը կից գրությամբ տրամադրվում է նախարարին:

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԴԵՂԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

- 1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի պաշտոնակատար (Խորհրդի նախագահ)- Անահիտ Ավանեսյան
- 2) Առողջապահության նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ – Գոհար Ղուկասյան
- 3) «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՀՄԴ-ի դեղերի տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ- Հակոբ Թովիջյան» (համաձայնությամբ)
- 4) Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կլինիկական ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ՝ Բ.Գ.Դ., պրոֆ. - Նարինե Միրզոյան (համաձայնությամբ)
- 5) ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձագիտական խորհրդի նախագահ - Էլմիրա Ամրոյան: